1400

22
9-13

1882

2010

ՀԱՏՈՒԱԾՔ

Փ. Ս. ԳՐՈՑ

Ս. ԳԱՐԱՄԱՃԵԱՆ

22
-13

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԱՅ Մ. ԱՇՃԵԱՆ
ՍԻՒՄՊԻՒԼԻԻ ԽԱՆ ՎԱՐԻ ՅԱՐԿ ԹԻՒ 35
1882

22
Գ-13
Ա.

ՀԱՏՈՒԱԾՔ

ԲԱ. ԳԵՐՈՑ

Ս. ԳԱՐԱՄԱՀԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԱՅ Մ. ԱՇՃԵԱՆ
ՍԻՒՄՊԻՒԼԻՒ ԽԱՆ ՎԱՐԻ ՅԱՐԿ ԹԻՒ 35
1882

2001

30088-Կ.Հ.

ՊԵՏ. ՀԱՆՐԱՊԵՏ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ ԱԳՄ ՍՍՀ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

(4975
47)

13314-58

ԱՌ

ԳԵՐ. Տ. ՄԱՏԹԷՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԻԶՄԻՐԼԵԱՆ

ԱՌԱՔԵԼԱՇՆՈՐՀ ՊԱՇՏՕՆԵԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՇՆՈՐՀԱՊԱՐՏ ԶԳԱՑՄԱՆՑ

ԱՐՁԱՆԱԿԱՆ

Ի՞րբ իշխեմ գքեզ երգել ի ձայն իմ փանաք,
Կրօնից մերոց դո՛ւ յողնաջան ըսպասեակ.
Յորժամ ոգի զարթուցեր յիս երկիւղած,
Տեղի յինէն եռուն չարիք քաշ ի բաց։
Վարժեալ ի կրօն ի մանկութեան իմում քև,
Քեզ ես ունայն ծանեայ զաչխարհ արդարև։
Ի բանից քոց որք ի յունկն իմ հընչեն դեռ,
Զդայի յայնժամ յանձին հրճուանս զեր ի վեր.
Ո՛վ սուրբ կըրօնք, դու յարուցեր ինձ հայր հեզ,
Որպէս մանկանց Իսրայելի ըզՄովսէս։
Զի՞րդ զբարիսդ հատուցանել է ինձ մարթ,
Բայց թէ եւեթ առ սէր քո կալ չնորհապարտ։

Եմ՝ Սրբազնութեանդ
Ն. Ծ.
ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՃԵԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Աստուածաշունչ գրոց սոյն գեղեցիկ հատուածները, որ քաղեցի ընտրողութեամբ Հէրտէր Գերմանացի երեւելի աստուածաբանէն և որուն հետեւած է Վ. Տիւրիի Գաղղիացի մեծանուն պատմագիրն, 'ի յաւելուածի անդ Ս. Գրոց պատմութեան իւրոյ, կընծայեն բարեպաշտ սրտերու հոգեզուարճ զմայլում և ախորժ, զորս անհնար է ընթեռնուլ առանց յաղկշտակուելու անոնց վսեմ իմաստներէն. Ս. Գիրքն ինչպառ դանձ մ'է ամէն անոնց, որ զանի ուշի ուշով կ'ընթեռնուն, և այս հատուածներն նորա գեղեցիկ մասերէն կազմուելով են իրաւամբ փունջ մի ոգեպարար բանից:

Ուստի փափաքելի է որ այս հատուածքս մանկանց նուիրուին յուսուցչաց կամ ի ծնողաց երբեմն երբեմն զանոնք բացատրելով ի լուր նոցա. կը խնդրուի մասնաւորապէս ի Մեծ. Ուսուցչաց հայկաբանութեան, որ սա՝ ընդունին իբրեւ գրքոյկ վերլուծութեան իրենց յանձնուած մանկտւոյն համար, ներողամիտ գտնուելով պստահած դժուարութեանց, որպէս զի տղայք ընտելանալով տակաւ առ տակաւ ուսման գրաւոր բարբառոյս, սկսին սերմանուիլ նոցա մատաղ սրտերուն մէջ հաւատոյ և բարոյականի հունձքերը. յայնժամ պիտի վարձատրուի գրքոյկիս աշխատասիրողն:

ՀԱՏՈՒԿԱԾՔ ԽՍ. ԳԻՐՈՅ

ԱՐԱՐՉՈՒԹԻՒՆ

«Օրհնեա անձն իմ զՏէր, տէր Աստուած իմ մեծ եղեր յոյժ։

«Արկար զլոյս որպէս զօթոց, ձգեցեր զերկինս որպէս զխորան և արկար 'ի վերայ ջուրց զվերնայարկս նորա։

«Ո դնէ յամպս զգնացս իւր, և շրջի նա 'ի վերայ թեւոց հողմոց։

«Ո հաստատեաց զերկիր 'ի վերայ հաստատութեան իւրոյ, զի մի սասանեսցի յաւիտեան։

«Խորք որպէս զգեստ վերարկու է նորա, 'ի վերայ լերանց կացցեն ջուրք։

«Ի սաստէ քումմէ փախիցեն, և 'ի ձայնէ որոտալոյ քումմէ սարսիցեն։

«Ելանեն լեռնանան՝ և իջանեն դաշտանան, 'ի տեղի յոր հաստատեցեր զնոսա։

«Սահման եդեր և ոչ անցանեն, և ոչ եւս դառնան 'ի ծածկել զերկիր։

«Առաքեցեր զաղբիւրս ընդ ծորձորս, ի միջոյ լերանց գնասցեն ջուրք։ Արբուցանել զամե-

նայն գազանս վայրի, յագեսցին ցիռք 'ի ծարաւս իւրեանց։

«Անդ թռչունք երկնից բոյնս դիցեն, և 'ի միջոյ վիմաց տացեն զձայնս իւրեանց։

«Արբուցանէ զլերինս 'ի չտեմարանաց իւրոց, 'ի պտղոյ գործոց իւրոց լցցի երկիր։

«Բուսուցեր զխոտ 'ի լերինս, զդալարի 'ի ծառայութիւն մարդկան։ Հաներ զհաց յերկրէ, գինի ուրախ առնէ՝ իւղ զուարթ, և հաց հաստատէ զսիրտ մարդոյ։

«Յագեսցին ծառքն անտառի, և մայրքն Լիբանանու զորս դու տնկեցեր։ Անդ թռչունք երկնից ձագս հանցեն։

«Արարեր զլուսին վասն ժամանակի, արեգակն ծանեաւ զժամ մտանելոյ իւրոյ։

«Արարեր զխաւար և եղեւ գիշեր, 'ի նմա գնան ամենայն գազանք անտառի։

«Կորիւնք առիւծուց մռնչեն և յափշտակեն, և խնդրեն յԱստուծոյ զկերակուրս իւրեանց։

«Ի ծագել արեւու ժողովին, և 'ի մտրիս իւրեանց դադարին։ Ելանէ մարդ 'ի գործս իւր, և 'ի վաստակս ձեռաց իւրոց մինչեւ յերեկոյ։

«Որպէս զի մեծ են գործք քո Տէր, զամենայն ինչ իմաստութեամբ արարեր, և լցաւ երկիր ստեղծուածովք քովք։

«Այս ծով մեծ և անդորր, 'ի սմա են սողունք, որ ոչ գոյ թիւ, գազանք մեծամեծք և մա-

նունք։ 'Ի սմա և նաւք գնան։ Վիշապն զոր ստեղծեր խաղալ նովաւ։

«Ամենեքեան քեզ սպասեն, և դու տաս կերակուր նոցա 'ի ժամու։ Տաս դու նոցա և կերակրին, բանաս զձեռն քո կերակրես զամենեսեան կամօք քովք։

«Դարձուցանես զերեսս քո 'ի նոցանէ և խռովին, հանես զոգի 'ի նոցանէ, պակասին և 'ի հող դառնան։

«Առաքես զոգի քո և ստեղծաս զնոսա, և նորոգես զերեսս երկրի (¹)։»

«Երկինք պատմեն զփառս Աստուծոյ, և զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն։

«Օր՝ աւուր բղխէ զբան։ և գիշեր՝ գիշերի յուցանէ զգիտութիւն։

«Ոչ են բանք և ոչ են խօսք, որոց ոչ լսին ձայնք նոցա։ Ընդ ամենայն երկիր ելն բարբառ նոցա, և մինչեւ 'ի ծագս աշխարհի են խօսք նոցա։

«Յարեւու եհար զխորան իւր, և ինքն որպէս փեսայ զի ելանէ յառագաստէ իւրմէ, և ցնծայ նա որպէս հսկայ յընթանալ զճանապարհս իւր։

«Ի ծագաց երկնից են ելք նորա, հանգիստ նորա մինչև 'ի ծագս նորուն։ և ոչ ոք իցէ, որ թաքիցէ 'ի տապոյ նորա (²)։

(¹) Սաղմոս. ՃԳ. 1–30։
(²) Սաղմոս. ԺԹ. 1–7։

ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ԱՍՏՈՒԾՈՅ

«Ա՛քանչելի եղեւ գիտութիւն քո յինէն, զօրացաւ, և ոչ հանդարտեմ սմա։

«Յո՛ երթայց ես յոգւոյ քումմէ, և կամ յերեսաց քոց ես յո՛ փախեայց։

«Թէ ելանեմ յերկինս, դու անդ ես, և թէ իջանեմ 'ի դժոխս՝ և անդր մօտ ես։

«Թէ առիցս զթեւս իմ ընդ առաւօտս, և բնակեցայց յեղերս ծովու։ Սակայն և անդ ձեռն քո առաջնորդեսցէ ինձ, և աջ քո ընկալցի զիս։

«Ասացի թէ խաւար ուրեմն արդեօք ծածկեաց զիս, կամ գիշեր փոխանակ լուսոյ փափկութեան իմոյ։ Խաւարն՝ 'ի քէն ոչ խաւարանայ, և գիշերն որպէս տիւ լուսաւոր եղիցի, և խաւար նորա որպէս և լոյս նորա (¹)։»

«Զի իմաստուն է մտօք՝ զօրաւոր և մեծ։ Ո՞ խստացաւ ընդդէմ նորա, և հանդարտեաց։

«Որ հնուցանէ զլերինս, և ոչ գիտեն. որ տապալէ զնոսա բարկութեամբ։

«Որ շարժէ զառ 'ի ներքոյս երկնից 'ի հիմանց և սիւնք նորա դողան։

(¹) Յովբ. Թ. 4–10։

«Որ ասէ արեգական, և ոչ ծագէ, և ընդդէմ աստեղաց կնքէ։

«Որ ձգեաց զերկինս միայն, և շրջի 'ի վերայ ծովու իբրեւ յատակի։

«Որ արար զբազմաստեղսն, և զգիշերավարն, և զսայլն, և զշտեմարանս հարաւոյ։

«Որ առնէ զմեծամեծս՝ և զանքնին՝ և զփառաւորս՝ և զհրաշակերտս՝ որոց ոչ գոյ թիւ (¹)։»

«Այսպէս ասէ Տէր. երկինք աթոռ իմ են՝ և երկիր պատուանդան ոտից իմոց (²)։»

«Զի իբրեւ զմէտ մի 'ի նժարից կշռոյ է ամենայն աշխարհս առաջի քո. եւ իբրեւ զկաթ մի առաւօտի ցողոյ՝ որ իջանէ յերկիր (³)։»

ՏԷՐ ԴԱՏԷ ՋԺՈՂՈՎՈՒՐԴ

«Տէր 'ի Սիոնի մեծ է, և բարձր է 'ի վերայ ամենայն ժողովրդոց (⁴)։»

«Աստուած եկաց 'ի ժողովս աստուածոց(*), և 'ի միջի նոցա դատէր զնոսա։

«Մինչեւ յե՞րբ դատիք անիրաւութեամբ, և ակն առնուք մեղաւորաց։

«Դատա զարարէք որբոյն եւ այրւոյ. իրաւունս արարէք տնանկին եւ խոնարհի։

(¹) Յովբ. Թ. 4–10։
(²) Եսայի ԿԶ. 1։
(³) Իմաստ. ԺԱ. 23։
(⁴) Սաղմոս Ղ.Ը. 2։
(*) Իմա՝ իշխանաց։

«Ապրեցուցէք զաղբատն եւ զանանկն՝ 'ի ձեռաց մեղաւորի փրկեցէք զնոսա։

«Ոչ իմացան եւ ոչ 'ի միտ առին՝ 'ի խաւարի գընացին՝ եւ շարժեցան ամենայն հիմունք երկրի։

«Ես ասացի թէ աստուածք իցէք կամ որդիք բարձրելոյ ամենեքեան։

«Դուք աւադիկ որպէս զմարդիկ մեռանիք. որպէս զմի յիշխանաց անկանիք։

«Արի Աստուած՝ եւ դատեա զերկիր՝ զի դու ժառանգեսցես զամենայն հեթանոսս (1)։»

«Ունկն լսէ՝ եւ ակն տեսանէ՝ Տեառն գործուած են երկոքեան (2)։»

«Որպէս զի թէ որ սնկեաց զունկն՝ ինքն ոչ լսիցէ. կամ որ ստեղծ զակն՝ ինքն ոչ տեսանիցէ (3)։»

ՅՈՅՍ Ի ՏԷՐ

Անիծեալ լիցի մարդ՝ որ արասցէ զյոյս իւր 'ի մարդ, և ապաստան լինիցի 'ի մարմին բազկի նորա. և ապստամբիցէ 'ի Տեառնէ սիրտ նորա։

«Եւ եղիցի իբրև զմիշավայրի յանապատի. և մի տեսցէ յորժամ գայցէ բարութիւն և բնակեսցէ յաղտաղտուկս անապատի, յեր-

(1) Սաղմոս ՁԱ։ (2) Առակք Ի։ 12։
(3) Սաղմոս ՂԳ։ 9։

կիր աղտաղտուկ ուր ոչ երբէք բնակիցին։

«Եւ օրհնեալ լիցի մարդն՝ որ յուսացաւ 'ի Տէր՝ և եղիցի Տէր յոյս նորա, և եղիցի իբրև ծառ զուարճացեալ 'ի գնացս ջուրց. և ընդ գնացս ջուրցն ձգտեցուցէ զարմատս իւր. և մի երկիցէ յորժամ հասանիցէ տօթ։ Եւ եղիցին տերևս նորա անտառացեալ շուրջ զնովաւ, յամէ երաշտութեան մի երկիցէ. և մի կասեսցի 'ի տալոյ զպտուղ (1)։»

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

«Ես մի բերանոյ անտի բարձրելոյն յառաջ եկի, և իբրև զմէգ ծածկեցի զերկիր։

«Շրջեցայ ես զծագօք երկրի, զանդունդս խորոց կոխեցի։ Շրջեցայ ես 'ի վերայ ալեաց ծովու և ընդ ամենայն երկիր, և զամենայն ազգս նստայայ։ Եւ յետ այսր ամենայնի հանգիստ խնդրեցի։ Եւ արդ՝ յո՞ր ժառանգութեան հանգեայց ես։

«Եւ ասէ ցիս Տէր. 'ի մէջ Յակոբու բնակեսցես դու, և Իսրայէլ ժառանգութիւն քո. 'ի սրբութեան նորա պաշտեցիս, և 'ի Սիոնի հաստատեցայ 'ի սիրեցեալն իմ քաղաք, նա իբրև զիս։

«Եւ հանգեայ ես յԵրուսաղէմ իշխանութիւն իմ, և ես 'ի նմա։

(1) Երեմիա ԺԷ։ 5-8։

«Եւ հաստատեցայ ի մէջ Իսրայելի՝ 'ի վիճակ ժառանգութեան Աստուծոյ։

«Իբրև նոճ բարձր 'ի լերինն Լիբանանու։ Եւ իբրև սարդ 'ի լերինն Հերմոնի։ Եւ իբրեւ վարդենի նորատունկ յԵրիքովա։

«Եւ իբրեւ ձիթենի վայելուչ 'ի դաշտի։ Եւ իբրև սաւս ի գնացս ջուրց բարձրացայ։ Հոտ արձակեցի իբրև գինամոն, և իբրեւ զմուռս ընտիրս արձակեցի հոտ անուշութեան։

«Եւ իբրեւ բեւեկնի արմատացուցի զոտս իմ։

«Ոստք իմ ոստք փառաց եւ շնորհաց։ Մատիք առ իս որ ցանկայք ինեւ եւ 'ի պտղոյ արմտեաց իմոց լցջիք։ (¹)

«Որ լսէ ինձ, ոչ ամաչէ, և որք գործեն ինեւ, ոչ մեղանչեն։ Իմաստութիւն շինեաց զիւր տուն, և կանգնեաց սիւնս եօթն։

«Զեն զզենլիս իւր, և խառնեաց 'ի խառնելիս զգինի իւր, և պատրաստեաց զսեղան իւր։

«Եւ առաքեաց զծառայս իւր, կոչել բարձր քարոզութեամբ 'ի խառնելիս իւր, և ասէ, որ ոք իցէ անըզգամ եկեսցէ առ իս, և ցպակասամիտս ասէ, եկայք կերայք 'ի հացէ իմմէ և արբէք զգինի իմ զոր խառնեցի ձեզ։

«Թողէք զանզգամութիւն և կեցջիք, խնդրեցէք զիմաստութիւն զի ապրեսջիք, եւ ուղղեցէք զիմաստութիւն զի

(¹) Սիրաք ԻԴ. 2–30։

զի գիտութեամբ զհանճար (¹)»։

«Տէր հաստատեաց զիս ի սկիզբն ճանապարհաց իւրոց 'ի գործս իւր, յառաջ քան զյաւիտեանս հաստատեաց զիս։ Ի սկզբանէ յառաջ քան զերկիր առնել, և նախ քան զանդունդս գործել, և նախ քան զբղխել աղբերաց ջուրց։

«Մինչդեռ պատրաստ էր զերկինս՝ ընդ նմա էի. և մինչ զատուցանէր զաթոռ իւր ի վերայ հողմոց։

«Եւ յորժամ զօրացուցանէր զամպս վերինս, և յորժամ հաստատուն դնէր զաղբիւրս 'ի ներքոյ երկնից, 'ի ժամանակի յորում հաստատուն դնէր զհիմունս երկրի։

«Ես էի առ նովաւ պատշաճեալ։ Ես էի որով ուրախ լինէր Տէր հանապազ, և ցնծայի առաջի նորա յամենայն ժամ։

«Յորժամ ուրախ լինէր ընդ աշխարհին բովանդակել, և ցնծայր յորդիս մարդկան։

«Ես իմաստութիւն բնակեցայ 'ի խորագիտութեան. զխորհուրդս և զգիտութիւն կոչեցի յիս։

«Ինեւ թագաւորք թագաւոր են, և հզօրք գրեն զարդարութիւն, ինեւ մեծամեծք մեծանան և բռունք ինեւ ունին զերկիր։

«Ես՝ որ զիսն սիրեն, սիրեմ. և որ զիս խնդրեն գտցեն շնորհս։

(¹) Սիրաք. Թ. 1–6։

«Երանեալ է այր որ լուիցէ ինձ և մարդ որ զճանապարհն իմ պահիցէ (1)։»

ՄԱՐԳԱՐԷ

(Երբեմն ժողովրդին ազիւից տեսքն է որ մարգարէն կը բռնադատէ խօսելու։)

«Որովայն իմ որովայն ցաւի և ճաշակելիք սրտի իմոյ հեծէին, սիրտ իմ դեղու, և անձն իմ ոչ դադարեսցէ զի ձայն փողոյ լուաւ անձն իմ, զգոյժ պատերազմին և զթշուառութեան (2)։»

«Տէր, Տէր, տայ ինձ լեզու խրատու, զի գիտացից խօսել 'ի ժամու զբանն։

«Պատրաստեաց զիս ընդ առաւօտս, յաւել ինձ ունկն 'ի լսել, և խրատ տեառն բանայ զականջս իմ, և ես ոչ խստանամ և ոչ ընդդէմ դառնամ։

«Զթիկունս իմ եատու 'ի հարուածս, զծնօտս իմ յապտակս, և զերեսս իմ ոչ դարձուցի յամօթոյ ընդ երեսս թքանելոյ։

«Եւ Տէր Տէր եղեւ իմ օգնական, վասն այսորիկ ոչ ամաչեցի, այլ արարի զդէմս իմ իբրեւ զվէմ հաստատուն։ Եւ գիտացի թէ ոչ ամաչեցիս։

(1) Առակք. Ը։ «Այս գլխոյս տունբրուն կարգը փոփոխուած է։»
(2) Երեմիա Դ. 10։

«Զի մերձ է որ արդարացուցանէն զիս, ո՞վ է ոսոխն իմ, եկեսցէ և կացցէ 'ի մէջ. և ո՞վ է որ դատին զիս, մերձեսցի առ իս։

«Ահաւադիկ դուք ամենեքեան իբրեւ զձորձս հնասջիք, և ցեց մեցամէս կերիցէք զձեզ։

«Ո՞վ իցէ 'ի մէնջ՝ որ երկնչի 'ի Տեառնէ, լուիցէ զձայն ծառայի նորա. որ գնային ընդ խաւար՝ և ոչ գոյր նոցա լոյս, յուսացեալք յանուն Տեառն և խրախուսեալք յԱստուած (1)։»

«Եւ ես էի 'ի մէջ գերութեան, առ ափն Քորաբ գետոյ. և բացան երկինք, և տեսի զտեսիլ Աստուծոյ։

«Եւ տեսի՝ և ահա հողմ վերացեալ գայր 'ի հիւսիսոյ, և ամպ մեծ 'ի կողման նորա և լոյս շուրջ զնովաւ, և հուր փայլատակէր 'ի նմանէ. և 'ի մէջ նորա իբրեւ զտեսիլ բաղմագունի ականց, և ճառագայթք 'ի նմա։

«Եւ 'ի մէջ նորա կերպարանք չորից դաղանաց. և այս տեսիլ նոցա. կերպարանք մարդոյ 'ի վերայ նոցա. եւ չորք դէմք միոյ, և չորք թեւք միոյ միոյ 'ի նոցանէ, եւ բարձք նոցա բարձք ուղղորդք. և ոտք նոցա թեւաւորք էին, և կճղակք նոցա իբրեւ զկճղակս ոտիւց. և կայծակունք թօթափէին 'ի նոցանէ

(1) Եսայի Ծ. 4-11։

(4975 42)
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀԱՅԿ. ԱԿԱԴ. ՍՍՀ

իբրեւ 'ի վայլատականց պղնձոյ։

«Եւ թեւք իւրեանց երագունք էին. և ձեռն մարդոյ 'ի ներքոյ թեւոց նոցա 'ի չորեսին կողմանս նոցա. և երեսք նոցա և թեւք չորեցունց ընդ միմեանս թեւակից էին խառնեալ. և զերեսս իւրեանց 'ի գնալն յետս ընդդէմ ոչ դարձուցանէին. իւրաքանչիւր հանդէպ երեսաց իւրեանց գնային։

«Եւ կերպարանք երեսաց նոցա՝ կերպարանք մարդոյ՝ և կերպարանք առիւծու յաջմէ չորեցունց. և կերպարանք եզին, և կերպարանք արծուոյ 'ի ձախմէ չորեցունց։ այս կերպարանք նոցա։

«Եւ թեւք նոցա տարածեալ 'ի վերուստ չորեցունց. իւրաքանչիւր երկու երկու խառնեալ ընդ միմեանս, և երկու երկու ծածկէին 'ի վերուստ զմարմինս իւրեանց։

«Եւ իւրաքանչիւր հանդէպ երեսաց իւրեանց գնային. յորս կողմն դիմէր հոգին՝ գնային, և յետս ընդդէմ ոչ դառնային 'ի գնացս իւրեանց։

«Եւ 'ի մէջ դաղանացն տեսիլ իբրեւ զկայծականց հրոյ բորբոքելոյ. և իբրեւ զտեսիլ ջամբարաց խառնելոց 'ի մէջ դաղանացն, և լոյս հրոյ. և 'ի հրոյ անտի վայլատակունք հատանէին. եւ դաղանքն երադս ընթանային, և թեթեւս դառնային 'ի նմանութիւն ակեդական։

«Եւ տեսանէի և ահաւասիկ անիւ մի յերկրի զհետ դաղանացն չորեցունց. և կերպարանք անուոցն և արար նոցա՝ իբրեւ զտեսիլ ականց Թարշշի, և կերպարանք չորեցունց՝ և տեսիլ նոցա, և գործուած իւրեանց, որպէս թէ շրջիցի անիւ 'ի մէջ անուոյ։

«Լի էին աչօք թիկունք նոցա շուրջ զչորեքումբք. և 'ի գալ դաղանացն, գնային և անիւքն ընդ նոսա, և 'ի վերանալ դաղանացն յերկրէ՝ վերանային և անիւքն. ընդ որ կողմն դիմէր ամպն և հոգին, երթային դաղանքն և անիւքն ընդ նոսին վերանային զի ոգի կենդանի դոյր յանիւսն։

«Եւ նմանութիւն հաստատութեան 'ի վերայ գլխոյ դաղանացն իբրեւ զտեսիլ ական վանի՝ տարածեալ 'ի վերայ թեւոց նոցա 'ի վերուստ։

«Եւ 'ի ներքոյ հաստատութեան թեւք իւրեանց տարածեալ սաւառնէին ընդ միմեանս. և իւրաքանչիւր երկու երկու ծածկէին ըզմարմինս իւրեանց։

«Եւ լսէի զձայն թեւոց նոցա 'ի սաւառնելն իբրեւ զձայն ջուրց բազմաց, և իբրեւ զձայն Աստուծոյ սատայի։ Եւ 'ի գնալն իւրեանց ձայն պատգամաց իբրեւ զձայն բանակի։

«Եւ ահա բարբառ 'ի վերուստ քան զհաստատութիւն որ էր 'ի վերայ գլխոյ նոցա

իբրեւ զտեսիլ ական շափիղայ, եւ նմանութիւն աթոռոյ 'ի վերայ նորա, եւ 'ի վերայ աթոռոյն՝ նմանութիւն կերպարանաց մարդոյ։

«Եւ տեսանէի իբրեւ զտեսիլ ական բազմագունի, և միջովք չոփ 'ի խոնարհ՝ նմանութիւն հրոյ. եւ լոյսն որ շուրջ զնովաւ բակ ունէր (¹)։»

«Եւ այս տեսիլ նմանութիւն փառացն Տեառն։

«Իբրեւ տեսի՝ անկայ 'ի վերայ երեսաց իմոց, և լուայ բարբառ որ խօսէր ընդ իս՝ եւ ասէր. որդի մարդոյ՝ կաց 'ի վերայ ոտից քոց, եւ խօսեցայց ընդ քեզ։

Եւ եկն 'ի վերայ իմ հոգի, վերացոյց եւ կանգնեաց կացոյց 'ի վերայ ոտից իմոց. եւ լսէի զի խօսէր նա ընդ իս, եւ ասէր՝ որդի մարդոյ՝ ես առաքեցից զքեզ առ դառնացուցիչ տունդ Իսրայելի... և խօսեսցիս ընդ նոսա զբանս զայսոսիկ։

«Տեսի՝ եւ ահա ձեռն ձգեալ առ իս, եւ 'ի նմա մատեան մի գրոյ, եւ պարզեաց առաջի իմ. եւ էր գրեալ 'ի նմա ներքոյ եւ արտաքոյ՝ ողբս եւ ձայնս եւ վայս (²)։

«Եւ ասէ ցիս, որդի մարդոյ՝ զոր ինչ գտանես 'ի դմա՝ կե՛ր, կե՛ր մանր զմատեանդ զայդ. եւ գնա՛ եւ խօսեաց ընդ որդիսն

(¹) Եզեկիել Ա. (²) Եզեկիել Բ. 1-3, 9

Իսրայելի (¹)։»

(Երեմիա նուազ եռանդով և նուազ մթութեամբ կիմացնէ իւր մարգարէական պաշտօնը, քաղցր նկարներով և չքեղ պատկերներով)։

«Եղեւ բան Տեառն առ իս՝ և ասէ. մինչչեւ ստեղծեալ էիր յորովայնի, գիտեմ զքեզ, և մինչչեւ ելեալ էիր յարգանդէ, սրբեցի զքեզ, մարգարէ 'ի հեթանոսս եդի զքեզ։

«Եւ ասեմ. որ ես՝ Տէ՛ր, Տէ՛ր. ահաւասիկ եւ խօսել իսկ ոչ գիտեմ, զի մանուկ եմ ես։

«Եւ ասէ ցիս Տէր. մի՛ ասեր եթէ մանուկ եմ ես, զի առ ամենեսեան առորս առաքեցից զքեզ՝ երթիցես, և ըստ ամենայնի զոր միանգամ պատուիրեցից քեզ՝ խօսեսցիս։

«Եւ ձգեաց Տէր զձեռն իւր առ իս և մերձեցոյց 'ի բերան իմ, և ասէ ցիս. ահա եատաւ զբանս իմ 'ի բերան քո (²)։

. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .

(¹) Եզեկիել Դ. 1։ (²) Երեմիա Ա. 4-9։

. . . . . .
. . . . . .(1) :

«Բանն որ եղեւ առ Երեմիա 'ի Տեառնէ՝ և ասէ. արի՛ է՛ջ 'ի տուն բրտին, և ա՛նդ լը-
ուցցես զբանս իմ :

«Իջի 'ի տուն բրտին, և ահա նա գործէր 'ի վերայ վիմաց :

«Եւ անկաւ աման մի՝ զոր ինքն գործէր 'ի կաւոյն՝ 'ի ձեռաց նորա. և դարձեալ արար զնա այլ աման՝ որպէս հաճոյ եղեւ առաջի նորա առնել :

Եւ եղեւ բան Տեառն առ իս՝ և ասէ. ահա-
ւադիկ իբրեւ զկաւդ 'ի ձեռս բրտիդ, այդ-
պէս էք 'ի ձեռս իմ տունդ Իսրայելի (2) :

ԿՈՒՌԲ

«Զի թեքեաց հիւսն զգործի իւր. ուրադ-
սրեաց, և կոփեաց նովաւ. դրով գործեաց
և դրօշեաց զնա, և զօրութեամբ բազկի
իւրոյ կանգնեաց զնա, քաղցեցեալ և տկա-
բասցի և ոչ արբցէ ջուր :

«Ընտրեաց հիւսն փայտ. չափով կշռեաց
զնա՝ և դրօշմեաց 'ի նմանութիւն պատկերի.
դրով կարգեաց զնա, և մածոյց զնա սոսին-
ձով. և արար ի պատկեր առն և 'ի զարդ դե-

(1) Կառավարութեան կողմանէ այս տողերը յապաւուած է :

(2) Երեմիա ԺԸ. 1-6 :

ղոյ երեսաց մարդոյ. հաստատեաց զնա 'ի տան իւրում :

«Զայն փայտ զոր եհատն. զսարդոյն՝ կամ ըղ-
սաւսն, զկաղնին կամ զթէ՛ղջն. զոր տնկեաց
Տէր եւ աճեցոյց անձրեւ :

«Զորոյ զկէսն այրեաց 'ի խարոյկի, և եփեաց
կայծակամբք նորա հաց՝ և խորովեաց միս,
կերաւ և յագեցաւ, և ջեռաւ, և ասէ՝ վաշ
ինձ զի ջեռայ՝ և տեսի զկրակ :

«Եւ զկէսն արար յԱստուած դրօշմեալ. և խո-
նարհեալ երկիր եպագ նմա. յաղօթս կայ
առ նա՝ և ասէ, փրկեա զիս՝ զի Աստուած իմ
ես դու :

«Դիտասջիր զի մոխիր է սիրտ նոցա (1) :

(Մի եւ նոյն հեղնութիւնը իմաստութեան գրոց հե-
տեւեալ մասին մէջ կը գտնուի) :

«Ապա թէ ոք ատաղձագործ հիւսն՝ զփայտ
ինչ դեղեցիկ սղոցեալ՝ քերեաց ճարտարու
թեամբ զամենայն կեղեւ նորա, և հնարեալ
վայելուչ անօթ պիտանի կազմեաց 'ի սպասա-
ւորութիւն կենաց :

Եւ զաւշիլ գործոյն 'ի պատրաստութիւն կե-
բակրոյ ծախեալ յագեցաւ. եւ որ ինչ 'ի նո-
ցանէ անպիտան և խոտան էր :

(1) Եսայի Խ. 12-17, 20:

«Զիայն խեղաթիւր և ոտով զարակեալ, առեալ դրօշմեաց մատդրութեամբ գործոյն իւրոյ, և խելամտութեամբ իմաստութեան տպաւորեաց զնա։

«Եւ նմանեցոյց զնա պատկերի մարդոյ՝ կամ անասնոյ վատթարի ճշդրտեցոյց զնա։

«Ծեփեաց բռով, և կարմրացոյց մնգուրաւ զգոյն նորա, և զամենայն խնդրունդս նորա ծեփեաց հողով։ Եւ արար նմա տուն ըստ նմին արժանի. եդ զնա առ որմ հաստատեալ երկաթով, և զգուշացաւ նմա զի մի կործանեսցի։

«Եւ վասն ամուսնութեան և որդւոց և ըստացուածոց իւրոց՝ մատուցեալ չշնչէ առ անշնչին. աղաչէ և ոչ ամաչէ։

Եւ վասն առողջութեան՝ զապիկարն կարդայ, և վասն կենաց զմեռեալն աղաչէ, և վասն 'ի թիկունս հասանելոյ՝ տարակուսելոյն մաղթէ։ (¹)»

(Սաղմոս ՃԺԳ գլխոյն մէջ կրսուի նաեւ)

«Մի երբէք ասասցեն 'ի հեթանոսս, թէ ուր է Աստուած նոցա։

«Աստուած մեր յերկինս և յերկրի, զամենայն զոր ինչ կամեցաւ և արար։

«Կուռք հեթանոսաց ոսկի և արծաթ են,

(¹) Իմաստ. ԺԳ։ 11–18

ձեռագործք են որդւոց մարդկան։ Բերան ունին՝ և ոչ խօսին, աչս ունին և ոչ տեսանեն։ Ականջս ունին՝ և ոչ լսեն, ունչս ունին՝ և ոչ հոտոտեն։ Ձեռս ունին՝ և ոչ շօշափեն, ոտս ունին՝ և ոչ գնան, և ոչ գոյ բարբառ 'ի կոկորդս նոցա։

«Նման նոցա եղիցին՝ այք արարին զնոսա. ամենեքեան այք յուսացեալ են 'ի նոսա (¹)։»

ՄԲԲԻԿ

«Շուրջ եղեն զինեւ երկունք մահու. ուղիք անօրէնութեան խռովեցուցին զիս։ Վիշք դժոխոց պաշարեցին զիս. ժամանեցին ինձ որոգայթք մահու։

«Ինեղութեան իմում ես առ Տէր կարդացի, և առ Աստուած իմ աղաղակեցի։

«Լուաւ ինձ 'ի տաճարէ սրբոյ իւրմէ ձայնի աղօթից իմոց, և աղաղակ իմ առաջի նորա մտցէ յականջս նորա։

«Խռովեցաւ եւ դողաց երկիր՝ եւ հիմունք լերանց սասանեցան եւ խռովեցան՝ զի բարկացաւ 'ի վերայ նոցա Աստուած։

«Եւ ծուխ 'ի բարկութենէ նորա, և հուր յերեսաց նորա բորբոքեցաւ և փայլատակունք

(¹) Սաղմոս ՃԺԳ. 2–8։

հատան 'ի նմանէ։

«Խոնարհեցոյց զերկինս եւ էջ, և մէգ 'ի ներքոյ ոտից նորա։ Եւ 'ի քրովբէս և թռեաւ և սլացաւ նա 'ի թեւս հողմոց։

«Եդ զխաւարն 'ի ծածկոյթ իւր, և շուրջ զնովաւ են յարկք իւր. և խաւարային ջուրք մինչեւ յամպս օդոյ։

«Ի փայլատակել նորա առաջի նոցա, ամպք անցուցին զկարկուտ և զկայծակունս հուր։

«Որոտաց Տէր յերկնից, և բարձրեալն ետ զձայն իւր 'ի կարկուտ և 'ի կայծակունս հուր։

«Առաքեաց զնետս իւր և ցրուեաց զնոսա, յաճախեաց զփայլատակունս իւր և խռովեցոյց զնոսա։

«Երեւեցան աղբերք ջրոց, և յայտնեցան հիմունք աշխարհի։ Ի սաստէ քումմէ Տէ՛ր և 'ի շնչել հոգւոյ բարկութեան քո։

«Առաքեաց 'ի բարձանց և ընկալաւ զիս, ընկալաւ զիս 'ի ջրոց բազմաց (¹)։

«Զայն Տեառն 'ի վերայ ջրոց, և Աստուած փառաց որոտաց, և Տէր ինքն 'ի վերայ ջրոց բազմաց։

«Զայն Տեառն զօրութեանց, և ձայն Տեառն մեծ վայելչութեանց։ Զայն Տեառն փշրէ զմայրս և մանրէ Տէր զմայրսն Լիբանանու (²)։

(¹) Սաղմոս. ԺԷ. 5–17։ (²) Սաղմոս ԽԹ. 3–5։

ԿԻՆ ՁԱՐ

«Որդեակ՝ մի հայիր ընդ կին չար. զի մեղր կաթէ 'ի շրթանց կնոջ պոռնկի, որ առ ժամանակ մի պարարէ զքիմն քո. բայց յետոյ դառնագոյն եւս դայցես քան զլեղի. և սրեալ առաւել քան զսուր երկայրի։

«Զի ոտք անդգամի իջուցանեն զմերձաւորս նորա մահու հանդերձ 'ի դժոխս (¹)»

«Եւ դպի ես զնա՝ և ասեմ թէ դառն է քան զմահ հանդերձ կնաւն՝ որ է որս և թակարդ սրտի նորա և կապանք 'ի ձեռս նորա։

«Բարին առաջի երեսաց Աստուծոյ զերծցի 'ի նմանէ և որ մեղաւորն է ընկղմեսցի 'ի նմա (²)։»

ԵՐԴ ՈՌԱԳԱՄՏԻ

«ՀԱՐՍՆ.—Սեաւ եմ ես և գեղեցիկ, դքսաերք Երուսաղեմի, իբրեւ զվրանս Կեդարու, և իբրեւ զխորանն Սողոմոնի։

«ՓԵՍԱՅՆ.—Ես ծաղիկ դաշտաց՝ շուշան հովտաց։ Իբրեւ շուշան 'ի մէջ փշոց. այնպէս մերձաւորդ իմ 'ի մէջ դստերաց։ Երդմնեցուցանեմ զձեզ, դստերք Երուսաղեմի 'ի զօրութիւնս և յուժգնութիւնս անդաստանի,

(¹) Առակք Ե. 3–5։ (²) Ժողովող Է. 27։

եթէ յառնիցէք՝ զարթուսջիք զսէրն մինչեւ կամեսցի։

«ՀԱՐՍՆ. — Ձայն եղբօրորդւոյ իմոյ, ահաւասիկ սա եկն վազս առնու 'ի վերայ լերանց՝ խաղաղացեալ 'ի վերայ բլրոց։

«Նման է եղբօրորդին իմ այծեմնան կամ որթուց եզանց 'ի վերայ լերանց Բեթելայ։

«Պատասխանի տայ եղբօրորդին իմ ինձ՝ և ասէ, արի եկ մերձաւոր իմ։ Զի ահա ձմեռն էանց, անձրեւք անցին և գնացեալ մեկնեցան, ծաղիկք երեւեցան յերկրի մերում. ժամանակ եհաս հատանելոյ՝ ձայն տատրակի լսելի եղեւ յերկրի մերում։ Թզենի արձակեաց զբողբոջ իւր. որթք մեր ծաղկեալք ետուն զհոտ իւրեանց։ Երեւեցո ինձ զերեսս քո, և լսելի արա ինձ զբարբառս քո, զի բարբառ քս քաղցր է՝ և տեսիլ քս գեղեցիկ (1)։»

ԿԵՆՑԱՂ ԾԱՌԱՅԱԿԱՆ

«Երանի ամենեցուն որք երկնչին 'ի Տեառնէ, և գնան 'ի ճանապարհս նորա։

«Զվաստակս ձեռաց քոց կերիցես, երանի է քեզ եւ բարի եղիցի։

(1) Երգ երգոց։

«Կին քո որպէս զայգի վայելուչ յանկիւնս տան քոյ. որդիք քո որպէս նորատունկ ձիթենւոյ շուրջ զսեղանով քով։

«Տեսցես դու զորդիս որդւոց քոց, խաղաղութիւն 'ի վերայ Իսրայելի (1)»

«Կին ժրաղլուխ եթէ գտանիցի՝ պատուականագոյն է այնպիսին քան զականս պատուականս։

«Վստահ է 'ի նա սիրտ առն իւրոյ. այնպիսին աւարաց երբէք ոչ կարօտացցի։ Գործակից է առն իւրում ամենայն բարեաց և կենաց՝ ոչ չարեաց։

«Գտեալ ասր և կոտաւ՝ արար անօթս պիտանիս ձեռօք իւրովք. եւ եղեւ իբրեւ զնաւ շահաբեր, 'ի հեռաստանէ ժողովէ իւր դանձս։

«Յառնէ ընդ արշալուրջս և տայ կերակուր ընտանեաց, և գործ նաժշտաց։

«Ձեռս իւր ընդարձակեաց աղքատաց, և կարկաղ պատուղ տնանկին։

«Արար առն իւրում բեհեզս և ծիրանիս, և անձին իւրում արկանելիս։

«Եւ երեւելի է 'ի դրունս այր նորա, յորժամ նստիցի 'ի ժողովրդեան 'ի մէջ ծերոց և բնակչաց երկրի։

«Զբերան իւր եբաց չաւով և իմաստու-

(1) Սաղմոս. ճիէ. 1-6։

թեամբ. և կարդ եդ լեզուի իւրում։
«Զլօրութիւն և զմեծ վայելչութիւն զգե-
ցար. և ուրախ եղեր յաւուրս յետին։
«Եւ այր նորա գովէ զնա՝ և ասէ։ Բազում
գործք ստացան զմեծութիւն. բազումք
արարին զօրութիւն. բայց դու առաւել ե-
ղեր՝ և անցուցեր զամենեքումբք։
«Սուտ հաճութիւնք և ընդունայն գեղ կնոջ
ոչ գոյ 'ի քեզ, զի կին իմաստուն և բարե-
պաշտօն օրհնեսցի և գովեսցի 'ի գրունս այր
նորա (¹)։»
«Զի՞ բարի կամ զի՞ վայելուչ, զի բնակին
եղբարք 'ի միասին։
«Որպէս իւղ զի իջանէ 'ի գլուխ և 'ի մո-
րուսն Ահարոնի, և 'ի մորուսն իջանէ 'ի գը-
բաստանս զգեստու նորա։
«Որպէս ցօղ զի ցօղէ 'ի Հերմոնէ, 'ի վերայ
լերին Սիոնի։ Անդ պատրաստեաց Տէր,
զօրհնութիւն և զկեանսն յաւիտենից (²)։»

ՅԱՐԳԱՆՔ ՈՐԴԻԱԿԱՆ

«Որդեակ՝ 'ի գործս և 'ի խօսս եւ յամե-
նայն ժուժկալութեան պատուեա զՀայր։ Զի
'ի վերայ եկեսցէ քեզ օրհնութիւն 'ի նմա-
նէ, եւ օրհնութիւն նորա մինչեւ 'ի վախճան

(¹) Առակք ԼԱ. 10-31։ (²) Սաղմոս ՃԼԲ։

մնասցէ։ Եւ որպէս ոք գանձէ, նոյնպէս
եւ որ պատուէ զմայր իւր։
«Որդեակ՝ զօրավիգն լեր ծերութեան հօր քո,
եւ մի՛ տրտմեցուցաներ զնա 'ի կեանս նորա։
«Զի փառք մարդոյ 'ի վերայ մեծարանաց հօր
իւրոյ, եւ մի՛ տրտմեցուսցես զնա 'ի կեանս
նորա։ Զի փառք մարդոյ 'ի վերայ մեծարա-
նաց հօր իւրոյ, նախատինք որդւոյ՝ անար-
գանք մօր։
«Առաւել վատահամբաւ է որ թողու զՀայր,
եւ անէծեալ է յԱստուծոյ որ դառնացուցա-
ցէ զմայր (1)։»

ԱՊԱՀԱՐՁԱՆ

«Զի տէր եդ ուխտ 'ի մէջ քո, եւ 'ի մէջ
կնոջ մանկութեան քոյ զոր թողերն. եւ նա
էր ամուսին եւ կին ուխտի քոյ։ Եւ ասա-
ցէք՝ թէ զինչ այլ ինչ խնդրէ Աստուած՝ ե-
թէ ոչ զաւակ։
Զդուշացարուք յոգիս ձեր, եւ զկին ման-
կութեան քոյ մի՛ թողուր, բայց եթէ առ-
աւել արձակեսցես՝ ասէ Տէր Աստուած Իս-
րայելի։ Ծածկեսցէ ամբարշտութիւն զխոց-
հուրդս քո՝ ասէ Տէր ամենակալ։ (2)»

(1) Մաղաքիա Գ։ (2) Մաղաքիա Բ. 14-16։

ԾՈՒԼՈՒԹԻՒՆ

«Երթ առ մելիւնն, ո՛վ վաս, և նախաձեռ ընդ ճանապարհս նորա եւ լեր խմաստնագոյն եւս քան զնա։ Զի նորա ոչ գոյ հողագործութիւն և ոչ հարկադիր, եւ ոչ ընդ տերամբք է, եւ պատրաստէ ամարանի զկերակուր բազում եւ համբարս դնէ 'ի հունձս։

«Կամ երթ առ մեղուն, զի թէպէտ եւ աբկար է զօրութեամբ, պատուեայ զիմաստութիւն՝ եւ յարգեցայ։

«Մինչեւ յե՞րբ անկեալ կաս, ո՛վ վատ, կամ ե՞րբ 'ի քնոյ զարթիցես։ Փոքր մի ննջիցես փոքր մի նոտիցես, փոքր մի նիրհիցես. փոքրը մի հանգուցանիցե՞ս զձեռն քո 'ի վերայ լանջաց։

«Ապա հասանիցէ 'ի վերայ քո իբրեւ զչար ուղեւոր տնանկութիւն. եւ կարօտութիւն իբրեւ զմիր սուրհանդակ։

«Ապա թէ անդանդաղ լինիցես, հասանիցէ իբրեւ զաղբիւր ամառն քո, եւ կարօտութիւն իբրեւ զայր մի չար ինքնահալած։ (1)»

«Ցանկութիւնք սպանանեն զվատս, զի ոչ յօժարեն ձեռք նորա գործել ինչ (2)։»

(1) Առակք Զ. 6-11։ (2) Առակք ԻԱ. 25։

ԱՐԲԵՑՈՒԹԻՒՆ

«Մեծամեծքն բարկասիրաք են, գինի մի արբցեն. զի մի իբրեւ արբցեն՝ մոռանայցեն զիմաստութիւն, եւ ուղիղ ոչ կարիցեն դատել զակարն։

«Տուք զարբեցութիւն տրամեցելոյ, և գինի ըմպել ցաւագնոտաց, զի արբցեն՝ և մոռասցին զտնանկութիւնս իւրեանց, և զցաւս իւրեանց ոչ եւս յիշեսցեն (1)։»

«Ո՞ւմ է վայ ո՞ւմ խռովութիւնք. ո՞ւմ են դատաստանք. ո՞ւմ դժնդակութիւնք և վրանք. ում ջաղջախանք տարապարտուց. ո՞յր են կապուտակ ականդիք։ Ոչ ապաքէն այնոցիկ՝ որք յամենն 'ի գինւոջ։

ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ

«Ապա եթէ 'ի տաշտս և 'ի բաժակս արձակիցես զաչս քո, յետոյ շրջիցես մերկագոյն քան զսանդատառն։

«Եւ 'ի վախճանի իբրեւ զօձահար տարածիցիս, և իբրեւ իժի թոյնք սփռեսցին (2)։»

«Մի յապաղեր բարի առնել կարօտելոյ, յորժամ ձեռնհաս իցես օգնել նմա։ Մի՛ ասիցես թէ երթ և եկեսջիր, և վաղիւ տայ, զի ոչ գիտես, զինչ վաղիւն ծնանիցի քեզ (3)։»

(1) Առակք Լ.Ա. 4-7։ (2) Նոյն ԻԳ. 23-33։
(3) Նոյն Գ. 27-28։

«Փոխ տայ Աստուծոյ, որ ողորմի տնանկին, ըստ տրոց նորա հատուսցէ նմա (1)։»

«Եթէ քաղցեալ է թշնամին քո՝ կերակրեա զնա, եթէ ծարաւի՝ տուր ըմպել. Աստուած հատուսցէ զայն քեզ (2)։»

«Զհուր վառեալ՝ շիջուցանէ ջուր, և զմեղս բաղումս քաւեն ողորմութիւնք (3)։»

ԲԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՐԱՆԱՒԷՏ

«Երկուս ինչս խնդրեմ ի քէն Տէր, մի հաներ յինէն զշնորհս մինչչեւ մեռեալ իցեմ։

«Զքան զուր և սուտ՝ հեռի արա յինէն։ Մեծութիւն և տնանկութիւն մի տար ինձ. այլ կշռեա ինձ զարժանն բաւականութեամբ։

«Զի մի՛ մեծացայց՝ և ստեցից. և ասիցեմ, թէ ո՞վ տեսանիցէ զիս. կամ աղքատացայց և գողացայց, և երդուայց յանուն Աստուծոյ իմոյ (4)։»

ԸՆԴՈՒՆԱՑՆ Է ԱՄԵՆԱՑՆ ԻՆՁ

«Ունայնութիւն ունայնութեանց՝ ամենայն ինչ ընդունայն է։ Զինչ աւելի է մարդոյ յամենայն վաստակս իւր զոր տաժանի ընդ արեգակամբ։

Ազգ երթայ և ազգ գայ՝ և երկիրս յաւիտեան կայ։

(1) Առակք ԺԹ. 17։ (2) Առակք ԻԵ. 21։
(3) Սիրաք Գ. 33։ (4) Նոյն Լ. 7–9։

«Ծագէ արեգակն՝ և մտանէ արեգակն, և ի տեղի իւր ձգի։ Ի ծագել իւրում ելանէ ընդ հարաւ և պատի ընդ հիւսիսի, պատելով պատիգնայ հողմ և ի շրջանս իւր դառնայ հողմ։

«Ամենայն ուխք ի ծով գնան, և ծով ոչ լցու, ի տեղի յոր ուխք գնան՝ անդ նոքին դառնան ի գնալ։

Զինչ է որ եղեւն, նոյն ինքն որ լինելոց է և զինչ է որ արարաւն՝ նոյն ինքն որ առնելոցն է։

«Եւ ոչ է ամենայն առ ժամայն ընդ արեգակամբ. զի զոր խօսիցի ոք՝ և ասիցէ՝ ահա՛ սա՛ սիկ այս նոր է, վաղ իսկ եղեալ ի յաւիտենից եղելոցն նախ քան զմեզ։

«Ոչ գոյ յիշատակ առաջնոցն. նաեւ ոչ վերջնոցն որ լինելոց են, ոչ գոյ յիշատակ նոցա ընդ լինելոցն ի վախճանի։

«Ես Ժողովող, եղէ թագաւոր ի վերայ Իսրայելի յԵրուսաղէմ և եռու զսիրտ իմ խնդրել և խորհել իմաստութեամբ վասն ամենայնի որ եղեալ են ընդ արեգակամբ։

«Զի զբաղումն չար ետ Աստուած որդւոց մարդկան զբաղել ընդ արեգակամբ։

«Տեսի ես զամենայն արարեալս որ արարեալ են ի ներքոյ արեգական. և ահա ամենայն ինչ ընդունայնութիւն է և յօժարութիւն ոգւոյ... և որ յոլովեաց ի գիտութիւն յաւելցէ ի կսաւ (1)։

(1) Ժողովող Ա. 2–18։

ՏԿԱՐՈՒԹԻՒՆ ԿԵՆԱՑ

«Ամենայն մարմին խոտ է, և ամենայն փառք մարդոյ իբրեւ զծաղիկ խոտոյ։ Ցամաքեցաւ խոտն եւ թօթափեցաւ ծաղիկն նորա և բան Տեառն Մնայ յաւիտեան (1)։»

«Բարի է երթալ 'ի տուն սգոյ՝ քան երթալ 'ի տուն արբեցութեան, զի այն է կատարած ամենայն մարդոյ (2)։»

«Դարձայ և տեսի ես զամենայն զրպարտութիւնս որ լինին ընդ արեգակամբ, և ահա արտասուք զրպարտելոյն. և ոչ ոք էր որ մխիթարէր զնոսա. և 'ի ձեռս զրպարտչաց նոցա բռնութիւնք։ Եւ գովեցի ես զամենայն մեռեալսն որ յառաջագոյն մեռան, քան զկենդանիսն՝ որ ցայժմ կենդանի իցեն։ Եւ քան զնոսա զերկոսին լաւ այն է որ չեւ եւս իցէ լեալ (3)։»

Զիարդ հպարտանայ երկիր և մոխիր, այսպէս և թագաւոր այսօր է և վաղիւն մեռանի։ Զի յորժամ մեռանիցի մարդ, ժառանգեսցէ զսողունս և զգազանս և զորդունս։

ՄԱՀ

Յուսացեալք 'ի զօրութիւն իւրեանց, 'ի բազմութիւն մեծութեան իւրեանց պարծեսցին։

«Եղբայր ոչ փրկէ՝ և ոչ փրկէ մարդ և ոչ տայ Աստուծոյ փրկանս, և ոչ զգինս փրկա-

(1) Եսայի Խ. 6–8։ (2) Ժողովող Է. 3։
(3) Ժողովող Դ. 1–3։

նաց անձին իւրոյ։ Վասնզի թանկագին է փրկութիւն անձանց նոցա։ Եւ կեցցես մինչ 'ի սպառ և ոչ տեսցես զապականութիւն։

«Յորժամ տեսցես թէ իմաստունք մեռանին, 'ի միասին անզգամք և անմիտք կորիցեն, և թողցեն օտարաց զմեծութիւնս իւրեանց։ Գերեզմանք տունք նոցա եղիցին յաւիտեան, և յարկք նոցա յազգէ մինչեւ յազգ, և կարգացին անուանք նոցա 'ի հողս իւրեանց։

«Մարդ 'ի պատուի էր և ոչ իմացաւ, հաւասարեաց անասնոց անբանից և նմանեաց նոցա։

«Այս ճանապարհ է գայթակղութեան նոցա նոցին, յետ այսորիկ բերանօք իւրեանց հաճեսցին։

«Որպէս խաչն 'ի դժոխս մատնեսցին և մահ հովուեսցէ զնոսա և տիրեսցեն նոցա ուղիղք ընդ առաւօտս։

«Օգնութիւնք նոցա մաշեսցին 'ի դժոխս և 'ի փառաց իւրեանց անկցին։

«Բայց սակայն Աստուած փրկեսցէ զանձն իմ 'ի ձեռաց դժոխոց, յորժամ ընդունիցի զիս։

«Մի երկնչիր յորժամ մեծանայ մարդ, և յորժամ բազում լինին փառք տան նորա։ Զի ոչ թէ 'ի մեռանելն իւրում առցէ ընդ իւր զամենայն և ոչ թէ իջցեն փառք տան նորա ընդ նմա։

«Այլ անձն նորա 'ի կեանս իւրում օրհնեսցի, խոստովան եղիցի քեզ յորժամ բարի արասցես դու նմա։ (1)»

(1) Սաղմոս ԽԸ. 7–18։

ԱՐԴԱՐՆ ԵՒ ԱՄԲԱՐԻՇՏ

«Այր անօրէն և անզգամ գնայ զճանապարհս թիւրս . . . վասն այսորիկ յանկարծակի հասցէ նմա կորուստ իւր, հաշումն՝ և մաշումն առանց բժշկութեան (1) ։»

«Խորհեցան յանձինս իւրեանց զանուղղայս և ասեն . սակաւ և ցաւագին են կեանք մեր, և ոչ գոյ բժշկութիւն 'ի վախճանի մարդոյ . և չերեւեցաւ որ դարձաւ 'ի դժոխոց ։

«Զի յանկարծակի իմն եղաք . և յետ այսորիկ լինիցիմք իբրեւ զչեղեալք ։ Զի իբրեւ զծուխ է շունչ յբռնգանս մեր, և իբրեւ զկայծակն բան 'ի շարժման սրտի մերում։

«Ցորոյ չիջանիցէն՝ մխիր լինի մարմին, և ոգին սփռի իբրեւ զօդ թոյլ։ Եւ անունս մեր մոռացի ժամանակաւ և ոչ ոք յիշատակեսցէ զգործս մեր։

«Անցցեն կեանք մեր իբրեւ զհետս ամպոյ, և իբրեւ զշամանդաղ ցրուեսցին հալածեալք 'ի ճառագայթից արեգական, և 'ի տապոյ նորա ծանրացեալք ։

«Արդ՝ եկայք՝ և վայելեսցուք 'ի բարութիւնս որ կանս . և վարեսցուք արարածովքս զբաղեալք իբրեւ 'ի մանկութեան ։

«Պէսպէս գինեօք և անոյշ իւղովք լցցուք . մի անցցէ առ մեօք ծաղիկ գարնայնոյ ։ Բո-

(1) Առակք 2. 12–15։

ղբիւք վարդից պսակեսցուք՝ մինչչեւ թառամեալ իցեն ։

«Զայս խորհեցան և խաբեցան. զի կուրացոյց զնոսա չարութիւն իւրեանց։ . . . Զի Աստուած հաստատեաց զմարդն յանեղծութեան, և 'ի պատկեր իւրոյ բարերարութիւն արար զնա։

«Ցայնժամ խռովեալ անհնարին երկիւղիւ, մեք անմիտք զվարս դորա մոլորութիւն համարէաք՝ և զվախճան դորա անարգութիւն։ Զիա՞րդ համարեցաւ ընդ որդիս Աստուծոյ, և ընդ սուրբս վիճակ դորա ։

«Զինչ չահ եղեւ մեզ հպարտութիւն, և զինչ մեծութիւն ամբարտաւանութեան իցէ մեզ նպաստաւոր ։

«Անց այն ամենայն իբրեւ զստուեր . և իբրեւ զհամբաւ առն ընթացեալ, եւ իբրեւ զնաւ սահեալ 'ի ջուրց կուտակելոց, զորոյ իբրեւ անցանիցէ՝ ոչ գոյ զհետսն գտանել. և ոչ զչաւիղս գնացից նորա 'ի մէջ ալեաց։

«Կամ իբրեւ զհաւու թռուցելոյ յօդս, որոյ ոչ գտանին նշմարանք գնացից . բաղխելով մագլաց պատառեալ զհողմն թեթեւ և հերձեալ բռնութեամբ ընդ ոլորտս մտանէ. յածել թեւոցն յառաջադէմ սլանայ կամ իբրեւ 'ի նետէ ձգելոյ 'ի նպատակ՝ կտրեալ օդն վազվազակի յինքն կարկատեցաւ առ 'ի ղեմտելոյ զանցս նորա ։ Նոյնպէս և մեք եղեալք՝ պակասեցաք . և առաքինութեան

նշանակ ոչ կարացաք ցուցանել. բայց 'ի չարիս մեր մաշեցաք։

«Զի յոյս ամպարշտի իբրեւ զփոշի յարուցեալ 'ի հողմոյ. և իբրեւ զսարդիոստային և զեղեամն 'ի մրրկէ հալեալ մանրի, և իբրեւ զծուխս մաշեալ 'ի հողմոյ. կամ իբրեւ զյիշատակ իշաւորի միոյ աւուր գնացելոյ։

«Բայց արդարք յաւիտեան կեցցեն. և 'ի տեառնէ վարձք նոցա, և խնամք նոցա 'ի բարձրելոյն։ Վասն այսորիկ ընկալցին զարքայութեան վայելչութիւն, և զթագն գեղեցկութեան 'ի ձեռանէ Տեառն։ (1) »

«Տեսի զամպարիշտն վերացեալ, բարձրացեալ որպէս զմայրս Լիբանանու։ Անցի՝ և ահա ոչ էր. խնդրեցի՝ և ոչ գտաւ տեղի նորա։ (2) »

ՆԵՐԲՈՎԹ ԿԱՄ ԷՋ ԱՐԲԱՑԻՆ ԲԱԲԵԼԱՑԻՈՑ Ի ԴԺՈԽՍ

«Եւ եղիցի յաւուր յայնմիկ, հանգուցէ զքեզ Տէր 'ի ցաւոց և 'ի սրամտութենէ քումմէ. և 'ի ծառայութենէ խստութեան՝ զոր ծառայեցեր նոցա։ Եւ առցես զոգբս զայս 'ի վերայ թագաւորին բաբելացւոց, և ասասցես յաւուր յայնմիկ. զիա՞րդ դադարեալ կայ պահանջողն, հանգեաւ տագնապողն։ Զի խորտակեաց Տէր զլուծ մեղաւորացն՝

(1) Իմաստ. Բ. Ե։ (2) Սաղմոս ԼԶ. 35-36։

զլուծ իշխանաց. սատակեաց զաղգսն սրրամտութեամբ. անհնարին հարուածովք բարկութեամբ յանխնայ. հանգեաւ յուսով երկիր ամենայն, և գոչէ ուրախութեամբ։ Եւ փայտքն Լիբանանու ոտնահար եղեն քեզ, և մայրքն Լիբանանու ասեն. թէ յորմէ հետէ դու դադարեցեր՝ ոչ ելին 'ի մեզ փայտահարք։

«Դժոխք 'ի ներքուստ դառնացան 'ի պատահելն քեզ. կանգնեցան միանգամայն հսկայքն ամենայն. որ լեալ էին իշխանք երկրի. որ յարուցին յաթոռոց իւրեանց զամենայն թագաւորս ազգաց։ Ամենեքեան պատասխանի տացեն քեզ՝ և ասասցեն. և դու իբրեւ զմեզ ըմբռնեցար, և ընդ մեզ համարեցար. իջին 'ի դժոխս փառք քո և բազում ուրախութիւնքդ, 'ի ներքոյ քոյ մէջս տարածեսցեն, և 'ի վերայ քո որդն յարկցի։

«Զիա՞րդ անկաւ յերկնից արուսեակն՝ որ ընդ առաւօտն ծագէր. անկաւ յերկիր, խորտակեցաւ՝ որ առաքէր առ ամենայն ազգս։

«Դու ասէիր 'ի մտի քում. ելից յերկինս, 'ի վերոյ քան զաստեղս երկնից արկից զաթոռս իմ. նստայց 'ի լերինն բարձու, 'ի վերայ լերանց բարձանց հիւսիսոյ. ելից 'ի վեր քան զամպս, եղէց նմանօղ բարձրելոյն։ Արդ՝ ահաւադիկ 'ի դժոխս իջցես և 'ի հիմունս երկրի. որք տեսանիցեն զքեզ՝ զարմացին 'ի վերայ քո, և ասասցեն. այս այն այր է, որ զայրացու-

ցանէր զերկիր, շարժէր զթագաւորս, որ առ-
նէր զամենայն տիեզերս աւերակ, և քակէր
զքաղաքս նոցա. դերեայ գերեդարձ ոչ արար։
«Ամենայն թագաւորք ազգաց ննջեցին պատ-
ուով. այր իւրաքանչիւր 'ի տան իւրում. և դու
անկցիս 'ի վերայ լերանց իբրեւ զմեռեալ
դարշելի։
«Պատրաստեա զորդիս քո 'ի սպանումն վասն
մեղայ հարց իւրեանց . . . ։ Յարեայց 'ի վերայ
նոցա, ասէ Տէր, և կորուսից զանուանս նոցա
և զզարմ. և արարից զԲաբիլոն աւերակ, չի
ընակեսցեն 'ի նմա ոգնիք և արարից զնա խոր-
խորատ ագմոյ 'ի կորուստ։ (1)»

ՅՈՅՍ ՅԱՌԱՊԱՅՄ

«Ուրախ լեր անապատ ծարաւի. ցնծասցէ
անապատն և ծաղկեսցէ՝ իբրեւ զշուշան։
«Եւ ծաղկեսցէ և ցնծասցէ անապատն Յորդա-
նանու. և փառքն Լիբանանու տացի նմա. և
պատիւն Կարմելայ, և Ժողովուրդ իմ տեսցէ զզ
փառս Տեառն և զբարձրութիւն Աստուծոյ մերոյ։
Զօրացարուք ձեռք լքեալք՝ և ծունկք կթու-
ցեալք. մխիթարեցարուք կարճամիտք սրտ-
իւք. զօրացարուք և մի երկնչիք։
«Ահաւասիկ Աստուած մեր հատուցանէ դա-
տաստան՝ և հատուցանէ. ինքնին եկեսցէ՝ և
փրկեսցէ զմեզ։

(1) Եսայի ԺԴ. 3–23։

Յայնժամ աչք կուրաց բացցին՝ և ականջք
խլից լուիցեն, յայնժամ վազեսցէ կաղն իբ-
րեւ զեղջերու, և պարզ լիցի լեզու ծանրա-
խօսաց։ Զի ջուր բղխեաց յանապատի և գետ
'ի ծարաւուտ երկրի, և եղիցի անջուրն յեզ-
միւրս եւ աղբիւր ջուրց 'ի ծարաւուտ երկրի։
Անդ եղիցի ուրախութիւն հաւուց եւ մակաղա-
տեղք խաշանց, անդ մարգագետինք և խաղք։
«Անդ եղիցին ճանապարհ մաքրեալ և ճանա-
պարհ սուրբ կոչեսցի. մի՝ անցցէ ընդ նա պիղծ.
եւ մի եղիցի անդ ճանապարհ պղծոյ. այլ ցըր-
ուեալքն գնասցեն ընդ նա՝ եւ մի մոլորեսցին։
«Մի եղիցի անդ առիւծ, եւ մի 'ի գազանաց
չարաց ընդ այն մի անցանիցէ. եւ մի ամենե-
ւին գտցի 'ի նմա. այլ ընդ նա գնասցին փրր-
կեալքն և ժողովեալքն վասն Տեառն։
«Դարձցին և եկեսցեն 'ի Սիոն ցնծութեամբ՝
և ուրախութեամբ յաւիտենից 'ի վերայ գլխոց
նոցա. զի 'ի վերայ գլխոց նոցա օրհնութիւն և
ցնծութիւն, և ուրախութիւն հասցէ նոցա. մեր-
ժեսցեն ցաւք՝ և տրտմութիւնք և հեծութիւնք՝»

ԱՌԱԿԲ ԵՒ ՀԱՆՃԱՐՆԴ ԲԱՆՔ

«Ոչի խնծոր ընդ սարդիոն յեռեալ. այնպէս
է խօսել զբանս իմաստունս։ (2)»
Բանք իմաստանոց իբրեւ զխթան եղանց. և իբ-

(1) Եսայի ԼԵ։ (2) Առակք ԻԵ. 11։

բեւ բեւեռք հարեալք 'ի մուրհակաց տուան 'ի հովուէ միոջէ։ (1)»

«Որպէս հողմք եւ ամպք եւ անձրեւք սաստիկք. նոյնպէս են։ եւ որ պարծին 'ի տուրս ստութեան։ (2)»

«Աստուծոյ երկիր եւ զպատուիրանս նորա պահեա. զի այս է մարդն ամենեւին։ (3)»

«Է ոսկի եւ բազմութիւն անդոց. եւ անօթ պատուական՝ շրթունք գիտութեան։ (4)»

Զատելութիւն գրգռէ հակառակութիւն, եւ զամենեսին որ ոչ հակառակին ծածկէ սէր։ (5)»

Եթէ հարցէ օձ 'ի թովել, ոչ ինչ է առաւելութիւն թովչին։ (6)»

«Սակայն եւ 'ի մտի քում մի անիծաներ թագաւորի, եւ 'ի շտեմարանս սենեկաց քոց մի՛ անիծաներ մեծի. զի թռչունք երկնից հասուցանեն զբարբառ քո, եւ որոց թեւք են պատմեն զբան քո։ (7)»

«Դանիւք հարուած զկապուտակ առնէ, իսկ հարուած լեզուի խորտակեսցէ զոսկերս։ (8)»

«Որպէս քաղաք կործանեալ 'ի պարսպաց եւ անպարիսպ լեցէ, նոյնպէս եւ այր, որ ոչ խորհրդով ինչ գործիցէ։ (9)»

(1) Ժողովող ԺԲ. 11։ (2) Առակք ԻԵ. 14։
(3) Ժողովող ԺԲ. 13։ (4) Առակք Ի. 15։
(5) Առակք Ժ. 12։ (6) Ժողովող Ժ. 11։
(7) Ժողովող Ժ. 20։ (8) Ժողովող ԻԸ. 21։
(9) Առակք ԼԵ։

«Ընդ առն լեզուանուոյ մի՛ կռուիր, զի 'ի վերայ հրոյ փայտ դիզես։ (1)»

«Որ խնամ զլսելիս իւր զի մի լուիցէ տկարաց. և նա կարդասցէ առ Ցէր, և ոչ լուիցէ նմա։ (2)»

«Յակոբոս անիրաւ մի սերմաներ, զի մի հընձեսցես եօթնապատիկ չար 'ի նմանէ։ (3)»

«Երեք բարեհաճոյեցան հոգւոյ իմոյ, որք են ընտիրք առաջի Աստուծոյ և մարդկան. միաբանութիւն եղբարց, և սէր մերձաւորաց, և առն և կնոջ բարւոք առ իրեարս համակամութիւն։ (4)»

«Պսակ ծերոց որդիք որդւոց, պարծանք որդւոց հարք իւրեանց։ (5)»

Երեք են զոր ատեաց անձն իմ, և գարշեցայ յոյժ 'ի կենաց նոցա։ Զհպարտ աղքատ և զմեծատուն սուտ՝ զալեւոր պոռնիկ և պակասեալ 'ի մտաց։ (6)»

«Իմաստութիւն ծերոց պսակ, և պարծանք նոցա երկիւղ։ (7)»

«Ընդ դեղ մարդոյ մի զարմանար, և զայր յականէ մի խոտեր։ Ի թռչունս փոքր է մեղու, եւ պտուղ նորա գեղեցիկ։ (8)»

«Որդեակ՝ ծանր ինչ քան զքեզ 'ի վեր մի

(1) Սիրաք Ը. 4։ (2) Առակք ԻԱ. 13։
(3) Սիրաք Է. 3։ (4) Սիրաք ԻԵ. 1։
(5) Առակք ԺԻ. 6։ (6) Սիրաք ԻԵ. 3–4։
(7) Սիրաք ԻԵ. 8։ (8) Սիրաք ԺԱ. 2։

առնուր, և որ մեծատուն է և հղօր՝ ընդ նմա մի հակառակիր։

Զինչ հաւասար է պոյտ ընդ կաթսայի, զի 'ի բաղխել առ իրեարս՝ 'ի կաթսայէ մանրի կաւն։ (1)»

«Հրաւիրեալ 'ի կարողագունէ գնա, զի յայսմանէ առաւել զքեզ հրաւիրեսցէ, մի վատթար լիցիս, և մի ըմբոստասցիս, և մի հեռի լիցիս 'ի նմանէ, մի գնասցես 'ի մոռացումն։

«Մնունդ չար՝ զհայր իւր անիծանէ, և ըզ մայր իւր ոչ օրհնէ։ Մնունդ չար առ արդարս ունի զանձն իւր. և զելս անձին իւրոյ ոչ լուացաւ։ Մնունդ չար՝ ամբարտաւան աչս ունի. եւ յարտեւանունս իւր հպարտանայ։ Մնունդ չար՝ իբրեւ զսուսեր ունի զատամունս իւր, եւ զժանիս իւր իբրեւ զկարոցս մաշել եւ ուտել զխոնարհս երկրի, եւ ըզ տնանկս 'ի մարդկանէ։ (2)»

«Երեք են զորս անհնար է ինձ իմանալ, եւ զչորրորդն ոչ ճանաչեմ։ Զհետս արծւոյ թռուցելոյ. և զճանապարհ օձի 'ի վերայ վիմի. և զշաւիղս նաւի ընդ ծով գնացելոյ, եւ զճանապարհս առն երիտասարդի։

«Երիւք չարժի երկիր, եւ չորրորդին ոչ կարէ հանդարտել. Եթէ ծառայ թագաւորեսցէ. և անմիտն՝ եթէ՝ յագեսցի հացիւ, և աղախին

(1) Սիրաք ԺԳ. 2, 3։ (2) Առակք Լ. 11–14։

եթէ հանէ զտիկին իւր, եւ կին տեղի՝ եթէ դիպեսցի առն բարւոյ։

Զորք են որ փոքր են յերկրի. և սուրբ իմաստունագոյնք են. քան զիմաստունս։ Մրջիւն՝ որոյ ոչ գոյ զօրութիւն, եւ պատրաստէ ամարայնոյ զկերակուր իւր։ Եւ ճագար, ազգ անհզօր որ արարին 'ի վէմս զդադարս իւրեանց։ Առանց թագաւորի է մարախ, եւ զօրաժողով լինի իբրեւ 'ի միոջէ հրամանէ օրինօք։ Եւ սարդ՝ կառուցեալ ձեռօք յորմ, որ դիւրին է առ որսալ, բնակէ 'ի յարկս թագաւորաց։ (1)»

ՑԱՑՏՆՈՒԹԻՒՆ

(Սրբոյն Յովհաննու յայտնութիւնը, որ արդարեւ մարգարէի յայտնութիւն մ'է՝ կ'իմացնէ Եկեղեցւոյն կրելիք հալածանքը, և Անոր պատրաստուած յաղթանակը։)

«Ես Յովհաննէս եղբայր ձեր, եղեւ յիս հոգի 'ի կիւրակէի աւուր, և լուայ զձայն զհետ իմ զմեծ իբրեւ զձայն փողոյ՝ որ ասէր ցիս գրեա՛ 'ի գիրս, զոր տեսանես։

«Եւ տեսի աթոռ մի՝ զի կայր յերկինս. եւ 'ի վերայ աթոռոյն նստէր նման տեսլեան ականց յասպեղոյ և սարդիոնի։

«Եւ քահանայք չուրջ զաթոռոն՝ նմանք տես-

(1) Առակք Լ. 18–19 21–28։

լեան զբմրբխտի. և շուրջ զաթոռովն՝ աթոռք քսան և չորք, և 'ի վերայ աթոռոցն նստէին քսան և չորք երիցունք՝ զգեցեալ հանդերձս սպիտակս, և 'ի գլուխս իւրեանց պսակս ոսկիս, եւ յաթոռոյ անտի ելանէին փայլատակմունք և ձայնք և որոտմունք. եւ եօթն ղամբարք հրոյ բորբոքելոյ առաջի աթոռոյն, որք են եօթն հոգիքն Աստուծոյ:

«Եւ էր առաջի աթոռոյն ծով ապակեղէն՝ նման սպիտակութեան սառին, և 'ի մէջ աթոռոյն չորք կենդանիք՝ և լի էին աչօք առաջոյ եւ յետոյ: Եւ ոչ հանդչէին՝ ոչ զտիւ եւ ոչ զգիշեր՝ ասելով սուրբ, սուրբ, սուրբ, Տէր Աստուած ամենակալ՝ որ էն և ես, և որ գալոց ես: Եւ էր կենդանին առաջին նման առիւծու, եւ երկրորդ կենդանին նման զուարակի, և երրորդ կենդանին երես մարդոյ, և չորրորդ կենդանին նման արծուոյ թռուցելոյ:

«Եւ յորժամ տային կենդանիքն փառս և պատիւ և գոհութիւն նստելոյն 'ի վերայ աթոռոյն՝ կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից. եւ դնէին զպսակս իւրեանց առաջի աթոռոյն ասելով, արժանի ես Տէր Աստուած մեր սուրբ՝ առնուլ փառս և պատիւ և զօրութիւն, զի դու ստեղծեր զամենայն՝ և 'ի կամէն քո ստեղծան՝ և կան հաստատուն:

«Եւ տեսի 'ի ձեռս աջոյ՝ որ նստէր 'ի վերայ աթոռոյն գիրք՝ գրեալ ներքոյ եւ արտաքոյ

և կնքեալ եօթն կնքով: Եւ տեսի հրեշտակ մի զօրաւոր՝ զի քարոզէր 'ի ձայն մեծ. ո՞է արժանի բանալ զգիրքս՝ և լուծանել զկնիքս նորա: Եւ ես լայի ուժգին զի ոչ ոք գտաւ արժանի բանալ զգիրքն՝ եւ հայել 'ի նա:

Եւ 'իմէջ երիցասցն՝ գառն կայր զենեալ և ելն ընկալաւ յաջոյ ձեռանէ նորա՝ որ նստէր 'ի վերայ աթոռոյն: Եւ յորժամ առ զգիրն, չորք կենդանիքն եւ քսան եւ չորք երիցունքն անկանէին առաջի գառնն, եւ ունէին իւրաքանչիւր քնար՝ և բուրվառ ոսկի լի խնկով, որ է աղօթք սրբոցն. եւ օրհնէին երգս նորս եւ ասէին. արժանի ես առնուլ զգիրդ՝ եւ բանալ զկնիքս դորա, զի զենար՝ եւ գնեցիր զմեզ Աստուծոյ արեամբդ՝ յամենայն ազգաց և 'ի լեզուաց և 'ի ժողովոց հեթանոսաց:

«Եւ տեսի՝ և ահա ձի շլոռոս, և որ նստէրն 'ի վերայ նորա՝ ունէր զմահ, եւ դժոխք երթային զհետ նորա. եւ տուաւ նմա իշխանութիւն չորրորդ մասին աշխարհի՝ սատակել սրով և սովով և մահուամբն և գազանօք երկրի:

«Եւ յորժամ երաց զկնիքն հինգերորդ՝ տեսի 'ի ներքոյ սեղանոյն զհոգիս ամենայն մարդկան կնքեալ վասն բանին Աստուծոյ՝ եւ վասն վկայութեան նորա զոր ունէին . . . և տուաւ արկանելիս սպիտակս, և արմաւենիս 'ի ձեռս իւրեանց:

«Եւ տեսի յորժամ երաց զկնիքն վեցերորդ՝ եղեւ շարժումն մեծ, և արեգակն եղեւ

սեաւ իբրեւ զկապերտ այծեայ, և լուսին բոլորովին եղեւ արիւն. եւ աստեղք երկնից թափեցան 'ի յերկիր, որպէս տերեւ թըզենւոյ զի ուժգին շարժիցի 'ի հողմոյ. եւ երկին իբրեւ զմագաղաթեայ գիրս գալարեր. և ամենայն լերինք և կղզիք 'ի տեղւոյ իւրեանց շարժեցան։

«Եւ թագաւորք երկրի և իշխանք՝ հաղարապետք և մեծամեծք և զօրաւորք՝ և ամենայն ծառայք, եւ ամենայն աղատք՝ թագուցին զինքեանս յայրս եւ 'ի ծերպս վիմաց։

«Եւ ասէին լերանց թէ՝ անկերուք 'ի վերայ մեր, եւ ցբլուրս՝ թէ ծածկեցէք զմեզ. զի եկն օր մեծ բարկութեան նորա, եւ ո՞վ կարէ կալ առաջի նորա։

«Եւ եղեւ ձայն յերկինս եւ ասէ. եղեւ թագաւորութիւն ամենայն տիեզերաց Տեառն մերոյ՝ Յիսուսի Քրիստոսի իւրոյ, և թագաւորեսցէ 'ի վերայ ամենայնի յաւիտեանս յաւիտենից։

«Եւ նշան մեծ երեւցաւ յերկինս, կին մի արկեալ զիւրեաւ զարեգակն, եւ լուսին 'ի ներքոյ ոտից նորա. եւ 'ի վերայ գլխոյ նորա պսակ աստեղեայ յերկոտասանից։

«Եւ երեւեցաւ այլ նշան յերկինս՝ եւ ահա-ւասիկ վիշապ մի մեծ հրեղէն, որոյ էին գլուխք եօթն՝ և եղջիւրք տասն, և 'ի վերայ նորա եօթն խոյրք, եւ վիշապն կայր առաջի կնոջն՝ որ հանդերձեալ է ծնանել, զի յորժամ ծնցի կինն զորդի իւր՝ կլցէ զնա վիշապն։

«Եւ յափշտակեցաւ որդի նորա առ Աստուած, և առաքեալք նորա և կիներն նորա փախեան յանապատս ուր էր տեղի նմա պատրաստեալ յԱստուծոյ։ Եւ եղև պատերազմ յերկինս, Միքայել և հրեշտակք իւր կռուէին ընդ վիշապին. եւ անկաւ վիշապն։

«Եւ տեսի՝ եւ ահա գառն կայր 'ի վերայ լերին Սիովնի, և ընդ նմա հարիւր քառասուն և չորս հազարք, որ ունէին զանուն նորա, եւ անուն հօր նորա գրեալ 'ի վերայ ճակատուց նոցա։

«Եւ լուայ ձայն յերկնից՝ որպէս զձայն ջուրց բազմաց՝ եւ ձայն որոտման մեծի։ Սոքա են՝ որ ընդ կանայս ոչ խառնակեցան, եւ են մաքուրք եւ անբիծք առաջի Աստուծոյ։

«Եւ տեսի այլ հրեշտակ թռուցեալ 'ի մէջ երկնից, եւ ունէր աւետիս յաւիտենական աւետարանել ամենայն ազգաց, եւ լեզուաց որ բնակեալ են յերկրի։

«Եւ այլ հրեշտակ երկրորդ դայր զհետ նորա եւ ասէր, անկաւ անկաւ Բաբելոն մեծն՝ 'ի գինւոյ արբեցութենէ՝ 'ի ցասմանէ՝ 'իպոռնկութենէ իւրմէ, որ արբեցոյց զամենայն հեթանոսս։

«Եւ տեսի՝ եւ ահա ամպ սպիտակ. եւ 'ի վերայ ամպոյն նստէր նման որդւոյ մարդոյ, եւ 'ի գլուխ իւր պսակ ոսկի, եւ 'ի ձեռին իւրում ունէր դերանդի սրեալ։

«Եւ այլ հրեշտակ ելանէր յերկնից, աղաղակէր 'ի ձայն մեծ՝ եւ ասէր. որ նստիսդ 'ի վերայ ամպոյդ՝ առաքեա զդերանդիդ քո՝

եւ հնձեա, զի եկն ժամանակ հնձոց, եւ հասեալ են հունձք երկրի։

«Եւ արկ հրեշտակն զդերանդի իւր յերկիր, եւ կթեր զխաղող նորա եւ արկանէր 'ի հընծանն Աստուծոյ 'ի մեծ։ Եւ կոխեցաւ հնծանն արտաքոյ քաղաքին, եւ ելանէր 'ի հնծանէն արիւն մինչեւ 'ի սանձս ձիոյն. եւ երկայնութիւն նորա հազար եւ վեց հարիւր ասպարէս։

«Եւ եկն մի ոմն յեօթն հրեշտակացն՝ որք ունէին զեօթն սկաւառակսն. խօսեցաւ ընդ իս՝ և ասէ. եկ այր և ցուցից քեզ զդատաստանս մեծ պոռնկին՝ որ նստի 'ի վերայ ջուրց բազմաց, ընդ որում պոռնկեցան թագաւորք երկրի, եւ արբեցան բնակիչք երկրի 'ի գինւոյ արբեցութեան պոռնկութեան նորա։

«Եւ տեսի զկինն արբեցեալ յարենէ սրբոց՝ եւ յարենէ ամենայն վկայիցն։

«Եւ այլ հրեշտակ իջեալ յերկնից աղաղակեաց 'ի ձայն մեծ՝ ասելով. անկաւ Բաբելն մեծն, որ եղեալ էր բնակութիւն դիւաց, և արգել ամենայն այսոց պղծոց, և բանդ պահպանութեան ամենայն ոգւոց անսրբից և ատելոց։ Եւ լուայ ձայն յերկնից զի ասէր, ելէք 'ի միջոյ դորա ժողովուրդ իմ, զի մի հաղորդ լիցիք մեղաց դորա, և մի զհարուածս դորա ընդունիցիք, զի հասին կցեցան մեղք դոցա մինչեւ յերկինս, և յիշեաց Աստուած զամպարշտութիւնս դորա։

Վասն այնորիկ 'ի միում աւուր եկեսցեն 'ի վերայ դորա հարուածք՝ մահ, և սուգ, և սով, և

'ի հուր այրեսցի... և լայցեն և կոծեսցին 'ի վերայ դորա թագաւորք երկրի՝ որք ընդ դմա պոռնկեցան և խաղացին. և հնծեսցեն յորժամ տեսցեն զծուխ կիզման տանջանաց դորա։

«Եւ վաճառականք երկրի ողբասցեն և սգասցեն 'ի վերայ քո, զի զբեռն նոցա ոչ ոք դնէ, և շահք որ 'ի քէն՝ ոչ եւս իցէ, ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականաց՝ և մարգարտաց և բեհեզոյ և ծիրանւոյ և ոսկեթելի և որթան, և ամենայն փայտ խնկոյ և ամենայն անօթ փղոսկրեայ, և ամենայն անօթ 'ի փայտէ պատուականէ և 'ի պղնձոյ և յերկաթոյ և 'ի կճոյ... և ասասցեն, վայ, վայ, քաղաք մեծ. որ զգեցեալ էիր բեհեզս և ծիրանիս և մարգարիտս։

«Եւ առ հրեշտակն հզօր՝ քար մի իբրեւ զերկան մեծ, և ընկէց 'ի ծով՝ ասելով. այսպէս յարձակմամբ անկցի Բաբիլոն քաղաք մեծ, և այլ ոչ եւս գտցի։

«Եւ յետ այնորիկ լուայ ձայն մեծ բազմութեան յերկինս՝ ասելով. Ալէլուիա, փառք զի թագաւորեաց Աստուած Ամենակալ։

«Խնդամք և տամք փառս նմա, զի եկն հարսանիք գառին։

«Եւ կինն հարս նորա պատրաստեաց զինքն. և տուաւ նմա զգենուլ բեհեզս սպիտակս սուրբս և լուսափայլս. որ է բեհեզս արդարութեան սրբոցն։

«Երանելիք են ամենեքեան՝ որ կոչեցեալ են

յընթրիս հարսանեաց գառին։

«Եւ տեսի զերկինս բացեալ, և ահա ձի սպիտակ, որ հեծեալն էր 'ի նմա հաւատարիմ և ճշմարիտ, և արդարութեամբ դատի՝ և պատերազմի. և աչք նորա բոց հրոյ, և 'ի վերայ գլխոյ նորա պսակս բազումս. և ունէր անուն գրեալ, զոր ոչ ոք գիտէ՝ բայց միայն ինքն, եւ արկեալ զիւրեւ հանդերձ ներկեալ արեամբ, և կոչէր անուն նորա Բան Աստուծոյ. եւ զօրավարք երկնից և զօրք երկնից զհետ երթային նորա ձիովք։ Եւ 'ի բերանոյ նորա ելանէր սուր սրեալ։

«Եւ տեսի այլ հրեշտակ՝ աղաղակեաց 'ի ձայն մեծ ամենայն հաւուց թռուցելոյ ընդ մէջ երկնից՝ ասելով. եկայք ժողովեցարուք յընթրիս մեծին Աստուծոյ, և կերջիք զմարմինս թագաւորաց, եւ զմարմինս երիվարաց՝ և ամենայն հեծելոյ 'ի նոսա, և զմարմինս ազատաց և ծառայից մեծի և փոքու։

«Եւ տեսի զգազանն՝ և զթագաւորս երկրի և զզօրս նոցա ժողովեալս առնել պատերազմ ընդ նմա որ հեծեալն էր 'ի ձի սպիտակ՝ և ընդ զօրս նորա։ Եւ ըմբռնեցաւ գազանն, և որ ընդ նմա սուտ մարգարէն և կենդանւոյն արկին զնոսա 'ի լիճ հրոյ այրեցելոյ ծծմբով. և այլքն մեռան 'ի սրոյ հեծելոյն 'ի վերայ ձիոյն՝ յորոյ բերանոյ ելանէր սուրն, և ամենայն թռչունք յագեցան 'ի մարմնոց նորա։

«Եւ տեսի այլ հրեշտակ զի իջանէր յերկնից,

և ունէր զփականս դժոխոց, և շղթայս մեծ 'ի ձեռին իւրում, և ըմբռնեաց զվիշապն զառաջին որ է բանսարկուն և սատանայ, և կապեաց զնա հազար ամ, և արկ զնա յանդունդս դժոխոց, և փակեաց և կնքեաց զնա զի այլ ևս մի եւս մոլորեցուցցէ զազգս։

«Եւ յետ հազար ամին լուծցէ զսատանայ՝ և հանցէ 'ի բանտէ անտի, ելցէ և մոլորեցուցցէ զազգս ամենայն ընդ չորս կողմանս երկրի։

«Եւ իջցէ հուր յերկնից առ 'ի յԱստուծոյ և կերիցէ զնոսա, և տեսի զմեռեալս մեծամեծս և զփոքունս որ կային առաջի աթոռոյն։

«Եւ այլ գիրք բացաւ կենաց, և դատեցան մեռեալք, 'ի գրելոյն ըստ գործոց իւրեանց, և որ ոչ ոք գտաւ 'ի գիրն կենաց գրեալ՝ արկաւ 'ի լիճ հրոյն։»

(Երկիրը դատուեցաւ, չարերը պատժուեցան, արդարները բաղմեցան յաւիտենականին դահուն չուրջը և երկնային Սիոնը հնչեց պրբոց երգերով։)

«Եւ տեսի երկին նոր, երկիր նոր, և զքաղաքն սուրբ զնորն Երուսաղէմ տեսի՝ զի իջանէր յաստուծոյ և յերկնից՝ զարդարեալ և պատրաստեալ որպէս հարսն՝ առն իւրոյ։

«Եւ լուայ ձայն մեծ յերկնից՝ որ ասէր, մահ ոչ եւս գոյ, ոչ սուգ՝ և աղաղակ, ոչ ցաւք և ոչ աշխարանք ոչ եւս գոյ։

«Եւ եկն առ իս մի յեօթն հրեշտականց և առաարաւ զիս 'ի լեառն մի բարձր և մեծ՝ հոգ-

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀՈՍ ԱՍՍՐ ՍՍՀ

ւոմն, և եցոյց ինձ զքաղաքս մեծ և սուրբ՝ Երուսաղէմ, զի իջեալ էր յերկնից առ 'ի Աստուծոյ։ Եւ ունէր զփառս Աստուծոյ։ Եւ էր 'ինքնա լուսաւորութիւն նմանեալ ականց պատուականաց՝ քար յասպիս սառնատեսակ և կենդանի։

«Եւ էին պարիսպք նորա մեծ և բարձր, և ունէր դրունս երկոտասան, և անուանք իւրաքանչիւրոց 'ի վերայ դրանցն գրեալ էին ըստ երկոտասան ցեղիցն Իսրայէլի։ Եւ պարիսպ քաղաքին ունէր հիմունս երկոտասան, և 'ի նոսա երկոտասան անուանք երկոտասան առաքելոց գառինն։

«Եւ էր չինուած պարսպայ քաղաքին յասպիս, և քաղաքն էր ոսկի մաքուր, և հիմունք քաղաքին յամենայն ականց պատուականաց, և էին երկոտասան դրունք յերկոտասան մարգարտաց։ Եւ տաճար ոչ տեսի 'ի նմա, քանզի Տէր Աստուած ամենակալ տաճար էր 'ի նմա՝ և գառնն։

«Եւ քաղաքին չէին պէտք արև[illegible]ան և լուսնի, զի լուսաւորեսցեն զնա, [illegible]զի փառքն Աստուծոյ լուսաւորէին զնա յամենայն ժամ. և գնային հեթանոսք 'ի լոյս նորա։

ՏՊԱԳՐԵԱԼ ՀՐԱՄԱՆԱՒ ՄԷԱՐԻՖԻ

ԳԻՆ 100 ՓԱՐԱՅ

1400

ԱՀ

1900

<< Ազգային գրադարան

NL0028347